



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 28 ՆՈՅԵՄԲԵՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալ ՚ս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ԲԱՆ ԽԱ

Ի ԽՈՐՈՑ ԱՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Կենդանի Աստուծոյ ամենօրհնեալ Որդի,
ահաւոր Հօրդ անհնիւն ծնունդն եւ Դուն,
Քեզի համար չկայ բնաւ անկարելի բան.
Քու ողորմութեանդ փառքին անստուեր նշոյլները երբ կը ծագին,
մեղքերը կը հալին, դեւերը կը հալածուին,
յանցանքները կը ջնջուին, կապանքները կը խզուին,
շղթաները կը խորտակուին, մահացածները կը կենդանաձնին,
հարուածները կը բժշկուին, վերքերը կ'առողջանան,
սպականութիւնները կը վերցուին, տխրութիւնները տեղի կու տան,
հեծութիւնները կը նահանջեն, խաւարը կը փախչի,
մէգը կը մեկնի, մառախուղը կը հեռանայ,
մոայլը կը փարատի, աղջամուղջը կը սպառի,
մութը կը վերնայ, գիշերը կ'անցնի,
տագնապը կը տարագրուի, չարիքները կը չփանան,
յուսահատութիւնները կը հալածուին,
ու Քու ամենակարող ձեռքդ կը թագաւորէ, ո՛վ քաւիչդ ամենայնի: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի Կուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵՐԳ ԵՐԳՈՅ 8:14

Աստուածաշունչ Մաքեանի առաջին բաժինը, որ կը կոչուի Հին Կրակարան, կը բաղկանայ երեք խմբաորումներէ՝ **Օրէնք, Գիրքեր, Մարգարեութիւն**: Հերաքրքրականօրէն Հին Կրակարանեան այս բաժինը, որ գիրքերու բաժինն է կ'աւարտի Քրիստոսի շուրափոյթ գալուստի յոյսովը: Իսկ Հին Կրակարանի գիրքերուն միւս բաժինը, որ մարգարեական գրութիւններն են կ'աւարտի **«Չըլլայ թէ ես գամ ու երկիրը անէծքով զարնեմ»** (Մաղաքիա 4:6): Իսկ Նոր Կրակարանը կ'աւարտի. «Այո, շուրով կու գամ ես: Ամէն, եկուր, Տէր Յիսուս» (Յայտն 22:20):

Եւ ահա հասած է պահը, ըսելու «եկուր»: **«Շուր ըրէ, ով իմ սիրականս, ու խնկաբեր լեռներուն վրայ այծեամի կամ եղնիկներու ձագի նման եկուր»**: Այծեամի կամ եղնիկներու ձագի նմանցնել, որ կը նշանակէ արագ ըրէ, շուրով եկուր: Ահա այս է ու պէտք է ըլլայ միակ ակնկալութիւնը Հարսին՝ Եկեղեցիին, Փետային շուրափոյթ գալուստը, որպէսզի Անոր հետ միասին Արագաստ մընէ ժառանգելու յաւիտենական կեանքը եւ Անոր հետ ըլլալու առ յաւեր: Այս սպասումով պէտք է ապրի Հարսը՝ Եկեղեցին մինչեւ Անոր գալուստը, եւ չտարուի աշխարհիկ հոգսերով:

Նոյն արտայայտութեան կը հանդիպինք Տէրունական աղօթքին մէջ երբ Քրիստոս աղօթել ստրվեցուց ըսելով, այսպէս աղօթեցէք. **«Թող Արքայութիւնդ գայ»**: Նախ թագաւորութիւն ըսելով կը հասկնանք նոյնինքն Քրիստոս: Եթէ թագաւորը ինքն է, ուրեմն թագաւորութիւնն ալ իր մէջն է: Երկրորդ, այդ թագաւորութիւնը աստիճանաբար մեր սեփականութիւնը կը դառնայ որքան արեւն որ Աստուծոյ կամքը կը կատարենք: Երրորդ, Եկեղեցին որպէս ամբողջութիւն, որպէս Աստուծոյ ժողովուրդը նաեւ Աստուծոյ թագաւորութիւնն է, երբ այդ ժողովուրդը այդ թագաւորութեան հպատակներն են: Ի վերջոյ, կայ այն վերջին հանգրուանը երբ այդ թագաւորութիւնը իր վերջնական վիճակին մէջ պիտի ներկայանայ: Ուրեմն, այս չորս իմաստներէն, որոնցմէ երեք արդէն կատարուած եւ ներկայ վիճակը ունին, հետեւաբար վերջին վիճակի փափաքն է, որ իւրաքանչիւր քրիստոնեայ անհար երբ կ'աղօթէ այդ խնդրանքով ու փափաքով կը դիմէ Աստուծոյ, որպէս ակնկալութիւն Աստուծոյ թագաւորութեան գալուստին ու մնայուն անոր հաստատման:

Իսկ Յայտնութիւն Յովհաննու գիրքի աւարտին նոյն խոստումը կը փրուի այդ յայտնութիւնը փրուողին կողմէ, այսինքն՝ Յիսուս Քրիստոսին կողմէ, այսինքն՝ Փետային կողմէ, եւ Հարսը՝ Եկեղեցին կը պատասխանէ. **«Ամէն, եկուր, Տէր Յիսուս»** (Յայտն 22:20):

Ուրեմն, բարարար չէ պարզապէս իմանալ, գիտնալ որ Եկեղեցին Հարսն է, Եկեղեցոյ մասին ինչեր ըսուեցան, այլ Եկեղեցին Փետային գալուստով ապրի, Անոր Թագաւորութեան ակնկալութեամբը բռնուած, այնպէս ինչպէս իմաստուն կոյսերը, իրենց լապտերներն համար յաւելեալ ձէթ առած սպասէն Փետայի գալուստին:

Տակաւին, ուրիշ մէկ այլ համեմատութիւն մը: Հին Կրակարանը կ'աւարտի հետեւեալ արտայայտութեամբ. **«Չըլլայ որ ես գամ ու երկիրը անէծքով զարնեմ»** (Մաղաքիա 4:6): Իսկ Յայտնութիւն Յովհաննու գիրքը կը փակուի հետեւեալ արտայայտութեամբ. **«Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ ըլլայ. ամէն»** (Յայտն 22:21): Սա կը նշանակէ, թէ Հարսը այնպիսի պատրաստութիւն պէտք է ունենայ որպէսզի Փետային գալուստին շնորհքին արժանանայ եւ ոչ թէ անէծքին: Ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. *«Իսկ հիմա որ իր արիւնով արդարացած ենք՝ որքան աւելի վստահութեամբ կրնանք ըսել՝ թէ Քրիստոսով պիտի փրկուինք Աստուծոյ բարկութենէն: Որովհետեւ, եթէ Աստուած իր Որդիին մահովը մեզ իր հետ հաշտեցուց դեռ այն արեւն՝ երբ փակաւին թշնամի էինք իրեն, հիմա որ ալ հաշտուած ենք՝ որքան աւելի վստահութեամբ կրնանք ըսել՝ թէ պիտի փրկուինք Քրիստոսի կեանքով»* (Հռոմ 5:9-10): Մէկ այլ ուրիշ փեղ կ'ըսէ. *«Ինչպէս կը սպասէք որ երկինքէն վերստին գայ Աստուծոյ Որդին, Յիսուսը, որ Աստուած մեռելներէն յարուցանեց, եւ որ մեզ պիտի փրկէ գալիք բարկութենէն»* (Ա Թես 1:10):

Ուրեմն, պատրաստ ըլլանք Անոր գալուստին: Եւ թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, Հօր Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիին հաղորդութիւնը մեր բոլորին հետ ըլլան: Ամէն: